**Հավելված 1Է**

**Ծրագրային ամփոփ հաշվետվություն**

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի
Տնօրեն՝ Գրիշա Հովհաննիսյանին

Հաստատություն — Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Դրամաշնորհային ծրագրի անվանում — Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» (HayLingvoTech) գերազանցության կենտրոնի ստեղծում

Դրամաշնորհային ծրագրի իրականացման ժամանակաշրջան 30.07.2019-20.03.2022

Դրամաշնորհային պայմանագրի համար 15/19-CIF

| N | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողություններ | Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծրագրված գործողությունների իրականացմանն ուղղված քայլեր | Դրամաշնորհային ծրագրի արդյունքներ | Դրամաշնորհային ծրագրի արդյունքների տարածման և շարունակականության ապահովման ուղղությամբ նախատեսվող գործողություններ |
|---|---|---|---|---|
| 1. | Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» | Հաշվողական լեզվաբանության, բնական լեզվի մշակման և թեստավորման ոլորտներում առաջանցիկ | - 4 գիտահետազոտական կենտրոն՝ հագեցած անհրաժեշտ սարքավորումներով և գույքով: | - 2023-2024 ուսումնական տարում նախատեսվում է մեկնարկել «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գերազանցության կենտրոնի ստեղծում | հետազոտությունների իրականացման նպատակով Ծրագրի շրջանակում ստեղծվել է Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնը, որը ներառում է ներքոնշյալ կենտրոնները.<br>**1. Լեզվական տեխնոլոգիաների և ռեսուրսների հետազոտական լաբորատորիան՝**<br>- Հաշվողական լեզվաբանության, բնական լեզվի մշակման և թեստավորման ոլորտներում առաջանցիկ հետազոտությունների իրականացման համար,<br>- հայերենի համար կարևորագույն թվային գործիքների և ծրագրակազմերի բարելավման և նորերի մշակման, օրինակ՝ մեքենական թարգմանության, խոսքի կամ ձեռագիր տեքստի ճանաչման, քերականության | - Համընթաց թարգմանության լինգաֆոնային կաբինետի համար «Nibelung" ծրագրային փաթեթ, "Rasch" վերլուծության և չափման ծրագրակազմ, Թեստերի վերլուծության ծրագրակազմ (Many-Facets Rasch Measurement-MFRM-software for Rasch Analysis:<br>- | «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական ծրագրերը: «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնը սպասարկելու է այդ մասնագիտությամբ սովորող ուսանողներին: Մասնավորապես, ուսանողները մասնակցելու են ոչ միայն ընթացիկ հետազոտությունների իրականացմանը, այլև հարստացնելու են UD_Armenian-BSUT ծառադարանը հավելյալ բառամթերքով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ստուգման համար,<br>- հայերենի իմացության մակարդակների գնահատման գործիքակազմի և ծրագրակազմի բարելավման և մշակման նպատակով:<br><br>***<u>2. Գիտակրթական միջոցառումների սրահը</u>***, Գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները լայն լսարանին ներկայացնելու, քննարկելու նպատակով, որտեղ տեղադրված են համընթաց թարգմանության սարքավորումներ՝ ԲՊՀ-ի ուսանողների և աշխատակիցների կողմից համընթաց թարգմանություն իրականացնելու նպատակով:<br>***<u>3. Ուսանողների տեխնոլաբան</u>***<br>Հագեցած անհրաժեշտ համակարգիչներով և սարքավորումներով հաշվողական լեզվաբանությամբ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասնագիտացող ուսանողների գործնական աշխատանքները և հետազոտությունները կազմակերպելու համար:<br>**<u>4. Համընթաց թարգմանության և թեստավորման լինգաֆոնային կաբինետ</u>**<br>Հագեցած անհրաժեշտ սարքավորումներով և համակարգչային ծրագրերով՝ սպասարկելու «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական ծրագիրը և հաջորդական ու համընթաց թարգմանության գործնական աշխատանքները կազմակերպելու նպատակով: | | |
| 2. | «Թվային ենթակառուցվածքներում հայերենի լիարժեք գործառության հիմքերի ապահովմանն ուղղված հետազոտությունների իրականացում» | ***<u>Հետազոտական թեմաներ</u>***<br>«ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի աշխատանքների մեկնարկը տրվել է արդեն դրամաշնորհային ծրագրի իրագործման փուլում: Մասնավորապես, հետազոտական խմբի կողմից մշակվել է <u>UD_Armenian-BSUT շարահյուսական ծառերի բանկը</u>, որը ներառել է շուրջ 40 000 բառանիշ ծավալը | - UD_Armenian-BSUT ծառադարան շուրջ 40000 բառամթերքով՝ հրապարակված www.github.com հարթակում,<br>- «Աշակերտների շրջանում հայերենի իմացության գնահատման» հետազոտության արդյունքներ,<br>- 4 գիտահետազոտական | ԲՊՀ-ի լեզվաբանության և թարգմանչական մասնագիտություններով սովորող ուսանողները իրենց գործնական աշխատանքների շրջանակում, կհարստացնեն UD_Armenian-BSUT ծառադարանը նոր բովանդակությամբ: Հաջորդիվ, հայերենի իմացության գնահատման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գերազանցող ժամանակակից գրական գործերի, իրավական և ժամանակակից մամուլի տեքստերի կորպուս, որն ամբողջապես հասանելի կլինի ս.թ. մայիսի 15-ին: Թեստավորման ուղղությամբ, ծրագրի ընթացքում իրականացվել է մեկ այլ հետազոտական աշխատանք՝ «Աշակերտների շրջանում հայերենի իմացության մակարդակի գնահատում» ուղղությամբ, որի ընթացքում հետազոտություն է իրականացվել ք.Երևանի, Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի 10 դպրոցների 8–րդ դասարանի աշակերտների շրջանում՝ հայերենի և հայ գրականության իմացության վերաբերյալ: Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս վերլուծելու մայրաքաղաքի և մարզային դպրոցներում հայերենի և հայ գրականության իմացության մակարդակները և դրանցով պայմանավորված ուսումնառության հետ կապված հիմնախնդիրները: Արդյունքները կարող են | թեմաներ հետագա ուսումնասիրություններ ի համար,<br>- «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի հայեցակարգ և կանոնակարգ: | հետազոտական խմբի կողմից ներկայացված հետազոտությունների ուղղությունները ներառվելու են «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի առաջիկա ուսումնասիրությունների ցանկում, որոնց մասնակցելու են թե՛ ուսառողները, թե՛ դասախոսները: Հետազոտություններ կիրականացվեն պարզելու ՀՀ հանրակրթական դպրոցներում ընթերցանության մակարդակը, աշակերտների՝ հայերենի իմացության գնահատման արդյունքում, ցուցաբերած արդյունքների՝ ՀՀ հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերը նշված որակներով պայմանավորվածության աստիճանը, TIMSS ստուգատեսի մեթոդաբանության կիրառմամբ այլ զույգ առարկաների իմացության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նպաստել ինչպես հայերենի և հայ գրականության իմացության թեստերի բարելավմանը, այնպես էլ արդիական դիդակտիկ և մեթոդական նյութերի մշակմանը: «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի աշխատանքները համակարգելու և առաջիկա գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվել է կենտրոնի հայեցակարգը և կանոնակարգը, որը ԲՊՀ-ի առաջիկա գիտական խորհրդի նիստին կներկայացվի հաստատման: | | արդյունքների գնահատում: <br>- Ավելին, ԲՊՀ-ն նախատեսում է համագործակցային նոր հարաբերություններ ստեղծել համապատասխան ոլորտներում աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ ազգային և միջազգային այլ համալսարանների հետ: |
| 3. | «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ մշակում և հաստատում | ***<u>Կրթական ծրագրի մշակում</u>*** <br><br>Ծրագրի ընթացքում լայնածավալ աշխատանքներ են տարվել «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ-ի մշակման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել են ՄԿԾ-ի հետևյալ բովանդակային հատվածները. <br>1) «Բառագիտություն» և | - «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական կրթական ծրագիր: <br>- (02) 0232 Լեզվաբանության ենթաոլորտում «Հաշվողական լեզվաբանություն» մասնագիտության նոր դասիչ: <br>- Վերապատրաստված դասախոսներ: | Ծրագրի ամբողջական իրագործման և շարունակականության նպատակով, ԲՊՀ-ի կողմից մշակվել է ՄԿԾ-ի լիցենզավորման փաթեթը, որը առաջիկա ժամանակահատվածում կներկայացվի ՀՀ ԿԳՄՍՆ՝ լիցենզավորման: Հավելյալ, նախապատրաստվում է համատեղ կրթական ծրագրի իրականացման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «Տիպաբանություն»<br>2) «Իմաստաբանություն»,<br>3) «Քերականություն»,<br>4) «Կորպուսային լեզվաբանություն»,<br>5) «Հավանականության տեսություն» և «Վիճակագրություն»,<br>6) «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (օպերացիոն համակարգեր, UNIX/LINUX և օբյեկտային ծրագրավորման իմացությամբ),<br>7) «Տեսական մաթեմատիկա»,<br>8) «Ծրագրավորում» (ծրագրավորման հիմունքներ և ալգորիթմերի՝ java, python ծրագրավորման լեզուների իմացությամբ)<br>«Բնականլեզուների ավտոմատ մշակում» և «Արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում»<br>**<u>Միջազգային փորձ</u>**<br>Կրթական ծրագրի մշակմանը նախընթաց ուսումնասիրվել է ԱՊՀ, ԱՄՆ, Եվրոպայի և Կանադայի «Հաշվողական լեզվաբանություն» մասնագիտությամբ կրթական | - Կիրառված միջազգային փորձ: | համաձայնագիր, որը կկանոնակարգի ԲՊՀ-ի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից համատեղ իրականացվող կրթական ծրագրի հիմնադրույթները: Զուգահեռ բանակցություններ են տարվում ՀՀ ԿԳՄՍՆ-ի հետ՝ համատեղ կրթական ծրագրի իրականացման արդյունքում կրթության վավերացման և շնորհվող դիպլոմի ձևաչափը սահմանելու ուղղությամբ: 2023-2024թթ ուսումնական տարում նախատեսվում է կրթական ծրագրի մեկնարկը: Հավելյալ, նախնական համաձայնություններ են ձեռքբերվել աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ՝ «Հաշվողական լեզվաբանություն» մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և շրջանավարտների զբաղվածության ապահովման ուղղությամբ: Նախատեսվում է նաև առավել լայն միջազգային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ծրագրերը, որի արդյունքները ներդրվել են «Հաշվողական լեզվաբանություն» ՄԿԾ-ում: Ավելին, այս նպատակով իրականացվել է այց Հայդելբերգի համալսարանի Գրավոր և բանավոր թարգմանության ինստիտուտ, ինչի արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը ներդրվել է համապատասխան կրթական ծրագրում: ՄԿԾ-ի գործնական իրագործման համար կարևոր նախադրյալներ են ստեղծվել ԲՊՀ-ի ռեկտորի և «ՀայԼինգվոՏեք» դրամաշնորհային ծրագրի ղեկավարի Մոսկվա այցելությամբ, որտեղ նախնական համագործակցային պայմանավորվածություններ են ձեռք բերվել Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի, Մոսկվայի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի և «ԱՐԵՎԱԿ» արևելահայերենի կորպուսի հեղինակ Վ. Պլունգյանի հետ: | | համագործակցություն «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ-ի իրագործման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի, Մոսկվայի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի, Վ. Պլունգյանի, ինչպես նաև Գերմանիայի Հայդելբերգի և Ֆրանսիայի ԻՆԱԼԿՈ համալսարանների հետ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Արդյունքում, «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ-ն՝ միջազգային փորձի անմիջական ներդրմամբ, ԲՊՀ-ն ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և ստացել է (02) 0232 Լեզվաբանության ենթաոլորտում «Հաշվողական լեզվաբանություն» մասնագիտության նոր դասիչ։<br><br>***<u>Վերապատրաստում</u>***<br><br>«Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական ՄԿԾ-ի մշակման ավարտին, այն ուսումնասիրվել է միջազգային փորձագետ, Հայդելբերգի համալսարանի լեզվաբանության պրոֆեսոր Վահրամ Աթայանի կողմից, որը ներկայացրել է իր դիտարկումները ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպել վերապատրաստում կորպուսային լեզվաբանության վերաբերյալ ՄԿԾ-ն իրագործող | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դասախոսների համար: Բացի այդ, վերապատրաստում է նաև կազմակերպվել Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր Բոգդան Բաբիչի կողմից «Կորպուսային լեզվաբանություն» և «Համշվողական լեզվաբանություն» թեմաներով: | | |
| 4. | «Համընթաց թարգմանություն» ՄԿԾ-ի մշակում և հաստատում | <u>**Կրթական ծրագրի մշակում**</u><br><br>Ծրագրի ընթացքում լայնածավալ աշխատանքներն են տարվել «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական ՄԿԾ-ի մշակման ուղղությամբ: Մասնավորապես, բուն աշխատանքներում ընդգրկված հետազոտողները մշակել են ՄԿԾ-ի հետևյալ բովանդակային հատվածները.<br>1) «Ոլորտային տերմինաբանություն», «Բանավոր հաջորդական թարգմանություն»<br>2) «Բանավոր համընթաց թարգմանություն»,<br>3) «Մասնագիտական գործունեություն և մասնագիտական էթիկա»: | - «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական կրթական ծրագիր;<br>- (02) 0232 Լեզվաբանության ենթաոլորտում «Համընթաց թարգմանություն» մասնագիտության նոր դասիչ;<br>- Վերապատրաստված դասախոսներ;<br>- Կիրառված միջազգային փորձ: | Ծրագրի ամբողջական իրագործման և շարունակականության նպատակով, ԲՊՀ-ի կողմից մշակվել է ՄԿԾ-ի լիցենզավորման փաթեթը, որը առաջիկա ժամանակահատվածում կներկայացվի ՀՀ ԿԳՄՍՆ՝ լիցենզավորման: 2023-2024թթ ուսումնական տարում նախատեսվում է կրթական ծրագրի մեկնարկը և առնվազն 10 ուսանողի ներգրավում: Հավելյալ, նախնական համաձայնություններ են ձեռքբերվել աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ՝ «Համընթաց թարգմանություն» մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և շրջանավարտների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ծրագրի ընթացքում, ստեղծվել է 24 անուն գրքերով գրադարան, որտեղ ներառվել են թարգմանությանը վերաբերող կարևոր արդիական տեսությունները և ձեռնարկները։<br>Արդյունքում, «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական ՄԿԾ-ն՝ միջազգային փորձի անմիջական ներդրմամբ, ԲՊՀ-ն ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և ստացել է (02) 0232 Լեզվաբանության ենթաոլորտում «Համընթաց թարգմանություն» մասնագիտության նոր դասիչ։<br><br>***<u>Միջազգային փորձ</u>***<br>Կրթական ծրագրի մշակմանը նախընթաց ուսումնասիրվել է ԱՊՀ, ԱՄՆ, Եվրոպայի և Կանադայի «Համընթաց թարգմանություն» մասնագիտությամբ կրթական ծրագրերը, որի արդյունքները ներդրվել են վերոնշյալ ՄԿԾ-ի մշակմանը։ Ավելին, այս նպատակով իրականացվել է | | զբաղվածության ապահովման ուղղությամբ։ Այս նպատակով, նախատեսվում է օգտագործել «Անգլերենի հաղորդակցման և թարգմանության» ամբիոնի ամբողջական ներուժը՝ ուսանողներին կոնֆերանսների և աշխատաժողովների թարգմանության գործընթացներում ակտիվորեն ներգրավելու համար։<br>Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ՄԿԾ-ում միջազգային փորձի առկայությունը, նախատեսվում է միջազգային գործընկերություններ հաստատել Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրերում ուսանողներին և դասախոսների ներգրավելու համար։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | այց Հայդելբերգի համալսարանի լեզվի և թարգմանության ինստիտուտ, որտեղ ծանոթացել է կորպուսային լեզվաբանությանը, կրթական ծրագրերին, այդ թվում՝ համընթաց թարգմանության ծրագրերին, ինչպես նաև, ինստիտուտում իրականացվող գործունեությանը: Այցի ընթացքում քննարկվել է հնարավոր համագործակցություն սահմանափակ տեղեկատվական ռեսուրսներով լեզուների համատեղ կորպուսներ ստեղծելու շրջանակում՝ տերմինաբանության համապատասխանության կամ մեքենական օժանդակությամբ թարգմանական նպատակներով: | | |
| 5. | Թվային ենթակառուցվածքներում հայերենի լիարժեք գործառության հիմքերի ապահովմանն ուղղված թվային և վեբ ռեսուրսներ, գնահատման ու | ***<u>Հայերենի՝ որպես օտար լեզվի, իմացության շրջանակ</u>***<br>Ծրագրի շրջանակում աշխատանքային խմբի կողմից լրամշակվել և ամփոփվել է Հայերենի՝ որպես օտար լեզու, իմացության մակարդակների | - Հայերենի՝ որպես օտար լեզվի, իմացության շրջանակ:<br>- Հայերենի, որպես օտար լեզվի, իմացության գնահատման թեստեր: | Նախատեսվում է հայերենի՝ որպես օտար լեզու, իմացության գնահատման թեստերը փորձարկում անցկացնելուց հետո, զետեղել առցանց հարթակում՝ առավել լայն հասանելիություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թեստավորման գործիքակազմ և համապատասխան հետազոտություններ | շրջանակը A1-ից C-1 մակարդակների համար: Աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են այլ լեզուների համար ստեղծված համանման փաստաթղթերը, կազմվել են միջազգային փորձի հենանշման արդյունքները, հստակեցվել են փաստաթղթի կառուցվածքի, բովանդակության, որոշ մեթոդների կիրառման հետ առնչվող հարցեր: Շրջանակը լայնորեն քննարկվել է ոլորտի մասնագետների հետ, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի, Երևանի պետական բժշկական համալսարանի (օտարերկրյա ուսանողների ամենամեծ թվաքանակով բուհը) հայոց լեզվի ամբիոնի ներկայացուցիչների հետ: Շրջանակը հնարավորություն է տալիս ստեղծել հայերենի՝ որպես օտար լեզվի, իմացության գնահատման թեստեր՝ տարբեր մակարդակների համար, մշակել անհրաժեշտ դիդակտիկ և մեթոդական ռեսուրսներ՝ հայերնի | | ապահովելու համար: Հաջորդիվ, ՀԻՄ-ի շրջանակը նախատեսվում է լայնորեն կիրառել հայերենի իմացության գնահատման թեստերի բազան հարստացնելու նպատակով:<br><br>Միևնույն ժամանակ, Հայերենի իմացության մակարդակների շրջանակի լայն կիրառման նպատակով, նախատեսվում է ներկայացնել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Եվրախորհրդին ներկայացնելու համար: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | որոնք զետեղվել են moodle հարթակում և հասանելի են հետևյալ հղմամբ http://elearning.brusov.am/course/view.php?id=1599: Թեստերը ուսանողների շրջանում փորձարկում անցնելուց հետո, կզետեղվեն առցանց հարթակում և հասանելի կլինեն հանրությանը: | | |

Ծրագրի ղեկավար